

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ  
պրո ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Չեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի՝ «Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածով առաջարկվում է ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու իրավունք վերապահել միայն տեղամասային ընտրական հանձնաժողովների այն անդամներին, ովքեր ընդգրկված են այլ համայնքի տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում: Գործող օրենսդրությանը հանապետական ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք օգտվում է այդ իրավունքից, իսկ առաջարկվող նորմն անհիմն կսահմանափակի հիշյալ իրավունքը: Հավելենք, որ այն հնարավորություն է տալիս ընտրողին միաժամանակ իրականացնել ընտրելու և ազատ տեղաշարժվելու ու բնակավայր ընտրելու իր սահմանադրական իրավունքները:

2. 2-րդ և 19-րդ հոդվածներով առաջարկվող փոփոխության արդյունքում խախտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով երաշխավորված գաղտնի քվեարկության հիման վրա ազատ ընտրությունների անցկացման սկզբունքը: Միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակման

Ենթակա չեն և հանդիսանում են քվեարկության գաղտնիության տարրերից մեկը: (Տես՝ Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում ճիշտ վարվելակերպի կանոնագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2003 թվականի ապրիլի 16-ի N ՍԴՈ-412 որոշումը):

3. 3-րդ, 13-րդ, 14-րդ, 20-րդ, 22-րդ և 23-30-րդ հոդվածներով առաջարկվող մեծամասնական ընտրակարգի և, որպես հետևանք, ինքնառաջադրման ինստիտուտների վերացումը պետական շինարարության ներկա փուլում անհրաժեշտ հիմնավորման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ առաջարկվող փոփոխության արդյունքում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացնել միայն համամասնական ընտրակարգով, որոնց կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրատարածքներ: Հաշվի առնելով, որ ներկայացված նախագծով ընտրատարածքների թիվը չի առաջարկվում, պետք է ենթադրել, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նորմերի կիրառման համատեքստում ընտրատարածքների թիվը կպայմանավորվի միայն Հայաստանի Հանրապետության ընտրողների ազգային գրանցամատյանում ընդգրկված ընտրողների թվով, ինչը կհակած նշված օրենսգրքի 17.1-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին, համաձայն որի յուրաքանչյուր ընտրատարածքի սահմանները որոշվում են այնպես, որ կազմավորված բոլոր ընտրատարածքներում ընդգրկված լինեն մոտավորապես նույն թվով ընտրողներ: Ընդ որում, այդ հոդվածով թվարկված գործոններով պայմանավորված շեղումը յուրաքանչյուր ընտրատարածքի համար չպետք է գերազանցի ընտրելու իրավունք ունեցող ընտրողների ընդհանուր թվի և ընտրատարածքների թվի հարաբերության 10 տոկոսը, իսկ բացառիկ դեպքերում՝ 15 տոկոսը: Եթե ընտրատարածքում ընտրողների թվի և ընտրողների ընդհանուր թվի ու ընտրատարածքների թվի հարաբերության տարբերությունը՝ բացարձակ արժեքով, գերազանցում է ընտրողների ընդհանուր թվի ու ընտրատարածքների հարաբերության 10 տոկոսը, ապա կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր որոշման մեջ պարտավոր է մատնանշել տվյալ որոշումը կայացնելու համար իինք ծառայած բոլոր գործոնները և հիմնավորել դրանց ազդեցությունը: Առաջարկվող փոփոխության արդյունքում նշված դրույթի կիրառումը դառնում է անհնարին, իսկ նախագծում այլ առաջարկ ներկայացված չէ:

4. Առաջարկվող փոփոխությունը հակասում է նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին, համաձայն որի «Յուրաքանչյուր ընտրատարածքի համար կազմավորվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով»: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գտնվելու վայրը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրատարածքների կազմավորման մասին որոշմանք»:

Տվյալ դեպքում խոսքը ոչ միայն միևնույն օրենսդրական ակտում անհարկի հակասությունների, այլև՝ առաջարկության անհիմն լինելու մասին է: Ընդ որում, ընտրական տարածքների կազմավորման ներկա կարգը ևս բխում է միջազգային չափանիշներից և անցել է միջազգային իրավական փորձաքննություն:

5. 5-րդ հոդվածի 2-րդ կետով և 8-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունների հետևանքով խախտվում է ընտրական հանձնաժողովների գործունեության կոլեգիալության սկզբունքը:

6. 7-րդ հոդվածով կատարվող փոփոխությունը վերաբերվում է պետական պաշտոնյա հանդիսացող թեկնածուներին քարոզարշավի ընթացքում տրամադրվող արձակուրդներին, որը հանդիսանում է պարտականություն և առնչություն չունի հոդվածի վերնագրի հետ: Ուստի նշված փոփոխությունը կարող է կատարվել միայն առաջադրված թեկնածուների պարտականություններին վերաբերվող հոդվածում:

#### 7. 10-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում անհասկանալի է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը, քանի որ առաջարկվող փոփոխության համաձայն ԿԸՆ-ն կազմավորվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում խնբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության և խորհրդարան չանցած առաջին չորս ընդդիմադիր կուսակցությունների նշանակած մեկական անդամից: Սակայն հանձնաժողովի կազմավորման համար անհրաժեշտ անդամների նվազագույն թվով անդամներ չնշանակվելու դեպքում՝ միշտ սահմանված նվազագույն թիվը լրանալը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ դատական ծառայողների թվից: Բացի այդ, պարզ չէ, թե ինչպես և ինչ չափանիշներից ելնելով է որոշվելու խորհրդարան չանցած «առաջին չորս» ընդդիմադիր կուսակցությունների մշտապես գործող մարմինների առաջնահերթությունը.

2) 2-րդ մասով առաջարկվող փոփոխությունն անհրաժեշտ իմմավորման կարիք ունի, քանի որ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի թեկնածուին միայն խորհրդարանական ընդդիմության կողմից առաջադրելու իրավունքի ամրագրումը կսահմանափակի խորհրդարանի մյուս ուժերի ներկայացուցիչների՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը.

3) 3-րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ դրամով կատարվող փոփոխությունը պետք է վերաբերվի ոչ թե օրենսգրքի 11-րդ հոդվածին, այլ 35-րդ հոդվածի 11-րդ կետին:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի 10-րդ և 11-րդ հոդվածներով առաջարկվող փոփոխությունները, որոնց համաձայն՝

ա. կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ կարող է լինել միայն խորհրդարանական ընդդիմության կողմից առաջադրված անդամը,

բ. ընտրատարածքային հանձնաժողովների նախագահների կեսը պետք է լինեն Ազգային ժողովում ընդդիմադիր խնբակցություն ունեցող կուսակցության ներկայացուցիչներ,

գ. Վիճակահանությամբ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահներ նշանակելու ընթացակարգը,

դ. օրենսգրքի 35-րդ հոդվածի 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին առաջարկը, համաձայն որի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ առաջին նիստում սահմանված կարգով չընտրվելու դեպքում, եռօրյա ժամկետում կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից:»,

անկատար են: Այն առավել ակնհայտ է դառնում, երբ փորձում ենք դրանք դիտարկել գործող ներմերի համատեքստում: Արդյունքում պարզ չէ, թե ինչ կարգով է ընտրվելու կամ նշանակվելու կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, եթե հանձնաժողովի նախագահն առաջին նիստում սահմանված կարգով չընտրվի, կամ հանձնաժողովում ներկայացված ընդդիմության միակ ներկայացուցիչն ինքնաբացարկ հայտնի, կամ չստանա անհրաժեշտ թվով կողմ ձայներ.

4) 4-րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանով նախատեսվող լրացումը պետք է վերաբերվի ոչ թե օրենսգրքի 12-րդ հոդվածին, այլ 35-րդ հոդվածի 12-րդ կետին:

8. 15-րդ հոդվածը սահմանափակում է հանձնաժողովի անդամների, վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների՝ քվեաթերթիկների տպագրությանը ներկա գտնվելու գործող ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը: Բացի այդ, հոդվածից պարզ չէ, թե ինչ չափանիշներից ելնելով է որոշվելու, թե Եվրամիության անդամ ո՞ր երկուում են տպագրվելու համապետական ընտրությունների քվեաթերթիկները, ինչ ընթացակարգով է դա իրականացվելու և ինչ ակնկալիքներ կարող ենք ունենալ:

9. 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներով կատարվող փոփոխություններով նախատեսված են ընթացակարգեր, որոնց համաձայն թանաքոտվում է ընտրողի մատը, որոշվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի թանաքի գույնը, ընտրողի գոչի գույնը: Այս առաջարկները հաշվի չեն առնուն ընտրական վարչարարություն իրականացնելու խնդիրները, նախատեսում են գործառույթներ, որոնք, ըստ միջազգային փորձի վերլուծության, ավելի են բարդացնելու ընտրական գործընթացները և արդյունքում հնարավոր են, որ ավելանա անվավեր քվեաթերթիկների թիվը: Այս կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում ճիշտ վարչելակերպի օրենսգիրքն արձանագրում է, որ պետք է խուսափել մեծ թվով քվեաթերթիկներ անվավեր կամ սխալ լրացված ճանաչելուց, իսկ կասկածի դեպքում՝ հասկանալ ընտրողի մտադրությունը:

10. 17-րդ հոդվածում՝

1) «մասով» բառը պետք է փոխարինվեր «կետով» բառով, քանի որ օրենսգիրքի հոդվածները բաղկացած են կետերից, այլ ոչ թե մասերից.

2) պարզ չէ, թե դրանով սահմանված գործընթացն անցնելուց հետո ընտրողները հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամին մոտենալուց հետո ինչ գործողություններ են իրականացնելու:

11. Ներկայացված նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության, 43-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, 45-րդ հոդվածի 7-րդ մասի և 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

12. Ներկայացված նախագծում առկա են նաև բովանդակային և խմբագրական բնույթի թերություններ, իսկ մեխանիկորեն կատարված նման հայեցակարգային փոփոխությունները հնարավոր են, որ խոչընդոտեն արդյունավետ ընտրական վարչարարության իրականացմանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում գործում է ընտրական օրենսդրությունը բարեփոխելուն ուղղված աշխատանքային խումբ, ուստի առավել իիմնավորված կլիներ, եթե նշված առաջարկությունները նախապես քննարկվեին պատգամավորներից կազմված հիշյալ խմբում:

Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս հարակից գեկուցմանք հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գ. Ղանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության  
օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածում՝

1) 3-րդ կետի առաջին նախադասության «ինչպես նաեւ այդ համայնքում բնակվող եւ որեւէ համայնքում հաշվառում չունեցող, իսկ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաեւ այլ համայնքում հաշվառված քաղաքացիները» բառերը ուժը կորցրած ճանաչել:

2) 3-րդ կետի առաջին նախադասությունը «յուրաքանչյուր ոք» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ այլ համայնքում հաշվառված եւ այդ համայնքի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակված քաղաքացիները» բառերով:

3) 3-րդ կետի երկրորդ պարբերության առաջին նախադասության «այլ համայնքի հաշվառում ունեցող» բառերից հետո լրացնել «եւ այդ համայնքի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակված» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին կետի առաջին նախադասությունից հանել «եւ ընտրողների ստորագրած ցուցակները» բառերը:

2) 1-ին կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ:

Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները ենթակա են իրապարակման, Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ վստահված անձանց եւ ընտրական հանձնաժողովների անդամների գրավոր պահանջի դեպքում, նրանց տրամադրում են դրանց պատճենները:

Հոդված 3. Օրենսգրքի 17<sup>1</sup>-րդ հոդվածի

1) 1-ին կետից հանել «՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորական տեղերի թվին հավասար» բառերը:

2) 6-րդ կետից հանել «կամ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 18-րդ հոդվածի

1) 3-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդ որում, տվյալ կազմակերպության սահմանած սակագները չեն կարող գերազանցել ընտրություններն անցկացնելու պաշտոնական հայտարարությանը նախորդող եռամսյակի՝ իր առեւտրային գովազդի գները, իսկ հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների համար՝ նաեւ տվյալ ժամերի համար նախատեսված միջինը»:

2) 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Նախընտրական քարոզության ժամանակ թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), ինչպես նաև նրանց կողմից ղեկավարվող իրավաբանական անձանց եւ նրանց ներկայացուցիչներին արգելվում է անձանք կամ իրենց անունից կամ որեւէ այլ եղանակով քաղաքացիներին, հանայնքներին, բոլոր տեսակի կազմակերպություններին եւ նրանց աշխատակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

3) 8-րդ կետից հետո լրացնել նոր՝ 8<sup>1</sup> կետ, հետեւյալ բովանդակությամբ.

Արգելվում է թեկնածուների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների գույքի, տրանսպորտային եւ այլ միջոցների օգտագործումը, որոնք միեւնույն ժամանակ չեն հանդիսանում տվյալ թեկնածուի ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված գույք, տրանսպորտային կամ այլ միջոց:

Հոդված 5. Օրենսգրքի 20-րդ հոդվածի

1) 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Համապետական ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո, պետք է իրապարակվի հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստաղմկերությամբ վճարովի եթերաժամի յուրաքանչյուր րոպեի գինը: Նախընտրական քարոզության փուլում այդ գինը չի կարող փոփոխվել եւ այն չի կարող ավել լինել, քան ընտրությունները անցկացնելու պաշտոնական հայտարարությանը նախորդող եռամսյակի իր առեւտրային գովազդի կես գինը:

2) 9-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզության սահմանված կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որի նույնիսկ մեկ անդամը նախընտրական քարոզության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու է դիմել դատարան:

Հոդված 6. Օրենսգրքի 21-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

Բոլոր տեսակի քարոզական պաստառների, նյութերի ու միջոցների կիրառումը եւ օգտագործումը պարտադիր պետք է ներառվեն նախընտրական հիմնադրամի մեջ: Ընդ որում, չեն թույլատրվում նվիրատվությունները կամ զեղչ գների կիրառումը՝ բացառությամբ շահագործման համար անձնական օգտագործման մարդատար մեկ մեքենայի տրամադրման:

Հոդված 7. Հոդված 22<sup>1</sup>-ը լրացնել 4-րդ կետով հետեւյալ խմբագրությամբ.

4) Նախագահական ընտրությունների ժամանակ գրանցված պետական պաշտոնյա հանդիսացող թեկնածուները քարոզարշավի ընթացքում գնում են պարտադիր արձակուրդ, որի ժամանակ պահպանվում է նրանց աշխատավարձի լրիվ չափը: Նշված անձինք կարող են աշխատանքի վերադառնալ միայն Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ՝ աղետներ, ռազմական դրություն կամ այլ ֆորս-մաժորային դեպքերում:

Հոդված 8. Հոդված 25-ի 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Եթե թեկնածուն կամ կուսակցությունը նախընտրական քարոզության համար, բացի նախընտրական հիմնադրամի միջոցներից, օգտագործում է նաև այլ միջոցներ, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նույնիսկ մեկ անդամի դիմումի հիման վրա

Դատարանը կարող է ուժը կորցրած ճանաչել թեկնածուի կամ կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը:

Հոդված 9. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ կետում «ընտրական հանձնաժողովի անդամները» բառերից հետո լրացնել «, համայնքի ղեկավարները, նրանց տեղակալները», բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 35-րդ հոդվածի

1) 1-ին կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմավորվում է Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության մշտապես գործող մարմնի եւ խորհրդարան չանցած առաջին չորս ընդդիմադիր կուսակցությունների մշտապես գործող մարմինների որոշմամբ նշանակված մեկական անդամից:

2) 7-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ կարող է լինել միայն խորհրդարանական ընդդիմության կողմից առաջադրված անդամը:

3) 11-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

4) 12-րդ հոդվածի սկզբում ավելացնել մեկ նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի եւ քարտուղարի թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին:

Հոդված 11. Օրենսգրքի 36-րդ հոդվածում՝

1) 1-ին կետից հանել «, բացառությամբ կենտրոնական» բառերից մինչեւ նախադասության վերջն ընկած հատվածը:

2) ավելացնել 9-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

Ընտրատարածքային հանձնաժողովների նախագահների կեսը պետք է լինեն Ազգային ժողովում ընդդիմադիր խմբակցություն ունեցող կուսակցության ներկայացուցիչները: Եթե այս թիվը չի ապահովում նախագահի ընտրություններով, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վիճակահանությամբ որոշում է այն ընտրատարածքները, որտեղ նշանակելու է նախագահ:

Հոդված 12. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 6-րդ կետի «մինչեւ ժամը 14:00-ն» բառերը փոխարինել «մինչեւ ժամը 19:00-ն» բառերով:

Հոդված 13. Օրենսգրքի 41-րդ հոդվածից հանել

1) 1-ին կետի 9-րդ ենթակետի «եւ մեծամասնական ընտրատարածքներում գրանցված թեկնածուների» բառերը:

2) 1-ին կետի 28-րդ ենթակետը:

Հոդված 14. Օրենսգրքի 42-րդ հոդվածից հանել

1) 1-ին կետի 14-րդ ենթակետի առաջին եւ երկրորդ նախադասությունները:

2) 1-ին կետի 19-րդ ենթակետի «մեծամասնական ընտրակարգով՝ Ազգային ժողովի, ինչպես նաև» բառերը:

Հոդված 15. Օրենսգրքի 49<sup>1</sup>-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակության նոր նախադասությամբ.

«Համապետական ընտրությունների քվեաթերթիկները տպագրվում են Եվրամիության անդամ որեւէ երկրում»:

Հոդված 16. Օրենսգրքի 53-րդ հոդվածի

1) 2-րդ կետի առաջին նախադասության «հանձնաժողովի անդամին» բառերից հետո լրացնել «ընտրողների մատների թանաքոտման համար պատասխանատու անդամին» բառերը, երկրորդ նախադասությունից հանել «Եւ քարտուղարը» բառերը, իսկ «չեն» եւ «Նրանք» բառերը համապատասխանաբար փոխարինել «չի» եւ «Նա» բառերով:

2) 2-րդ կետի առաջին նախադասությունը շարունակել հետեւյալ բառերով.

«Եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի թանաքի գույնը»:

Հոդված 17. Օրենսգրքի 55-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1<sup>1</sup> մասով, հետեւյալ բովանդակությամբ.

Հանձնաժողովի՝ ընտրողների մատների թանաքոտման համար պատասխանատու անդամը համապատասխան սարքավորման միջոցով ստորագրում է ընտրողի աջ ցուցանատի վրա անգույն հեղուկի առկայությունը, դրա բացակայության դեպքում անգույն հեղուկով թանաքոտում է ընտրողի աջ ցուցանատը, որից հետո ընտրողին թույլատրում է մոտենալ հանձնաժողովի՝ ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամին:

Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետում ավելացնել մեկ նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

Անձնագրին փոխարինող փաստաթուղթը տրամադրվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ:

Հոդված 18. Օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը «նշում» բառից հետո լրացնել «կամ քվեարկությունը կատարվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված գույնի թանաքից տարբերվող գույնի գրչով»:

Հոդված 19. Օրենսգրքի 61-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7<sup>1</sup> կետով.

Նիստի վերջում տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրողների ստորագրված ցուցակների պատճենները փակցնում է տեղամասային կենտրոնում՝ հստակ տեսանելի տեղում:

Հոդված 20. Օրենսգրքի 63<sup>1</sup>-րդ հոդվածի

1) Վերնագրից հանել «Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների եւ» բառերը:

2) 1-ին, 3-րդ եւ 11-րդ կետերից հանել «Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների եւ» բառերը:

Հոդված 21. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 9-րդ կետի «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով:

Հոդված 22. Օրենսգրքի 95-րդ հոդվածի

1) 1-ին կետում հանել «Եւ մեծամասնական» բառերը, իսկ «ընտրակարգերով» բառը գրել «ընտրակարգով»:

2) 2-րդ կետում «90» թվի փոխարեն գրել «131»:

3) 3-րդ կետը հանել:

Հոդված 23. Օրենսգրքի 96-րդ հոդվածի

1) 1-ին կետից հանել «Եւ մեկ ձայնի իրավունք՝ միամանդատ ընտրատարածքում» բառերը:

2) 2-րդ կետից հանել «Եւ միայն մեկ մեծամասնական ընտրատարածքում» բառերը:

Հոդված 24. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 8-րդ կետը հանել:

Հոդված 25. Օրենսգրքի 104-րդ հոդվածը հանել:

Հոդված 26. Օրենսգրքի 105-րդ հոդվածը հանել:

Հոդված 27. Օրենսգրքի 106-րդ հոդվածը հանել:

Հոդված 28. Օրենսգրքի 108-րդ հոդվածը հանել:

Հոդված 29. Օրենսգրքի 109-րդ հոդվածը հանել:

Հոդված 30. Օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ կետից հանել «Եւ մեծամասնական» բառերը, իսկ «ընտրակարգերով» բառը դարձնել «ընտրակարգով»:

Հոդված 31. Օրենսգրքի 112-րդ հոդվածի

1) Վերնագրից հանել «պատգամավորության թեկնածուի եւ» բառերը:

2) 1-ին կետից հանել առաջին եւ երկրորդ պարբերությունների «պատգամավորության թեկնածուի եւ» բառերը:

3) 2-րդ կետից հանել «Թեկնածուն իրավունք ունի իր հիմնադրամում մուծում կատարելու հայտանի հանրապետության նվազագույն աշխատավարձի մինչեւ 1000-ապատիկի չափով» բառերը:

4) 3-րդ կետից հանել «թեկնածուի եւ» բառերը:

5) 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Նախընտրական քարոզչության ընթացքում կուսակցությունն իրավունք ունի ծախսել նվազագույն աշխատավարձի 90 000-ապատիկը չգերազանցող գումար:

6) 5-րդ կետից հանել «պատգամավորության թեկնածուները եւ» բառերը:

Հոդված 32. Օրենսգրքի 114-րդ հոդվածից հանել 1-ին, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերը:

Հոդված 33. Օրենսգրքի 116-րդ հոդվածը հանել:

Հոդված 34. Օրենսգրքի 117-րդ հոդվածից հանել 6-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերը:

Հոդված 35. Օրենսգրքի 118-րդ հոդվածից համել 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերը:

Հոդված 36. Օրենսգրքի 119-րդ հոդվածից համել 5-րդ եւ 6-րդ կետերը:

Հոդված 37. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման հաջորդ օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության  
օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ

Սույն օրենսդրական նախաձեռնության նպատակն է կատարելագործել Ընտրական օրենսգիրքը եւ ընտրությունների գործընթացն առավել մոտեցնել ժողովրդավարական չափանիշներին, որն անշուշտ իր դրական ազդեցությունը կթողնի ընտրությունների նկատմամբ հասարակության վստահության աճին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ  
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Չեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ստյոպա Սաֆարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված նախագիծը հետընթաց քայլ է սույն թվականի հունիսի 16-ին «ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններից, ինչն ըստ էության կատարվել էր ԵԽ փորձագետների կողմից արված առաջարկությունների հիման վրա: Այդ առումով գտնում ենք, որ նախագծով նախատեսված փոփոխությունները կարող են կատարվել միայն ԵԽ փորձագետների հետ քննարկելուց հետո: Բացի այդ,

Նախագծի 1-ին հոդվածն ընդունելի չէ, քանի որ հրապարակային միջոցառման իրականացումն արգելելու վերաբերյալ պաշտոնական հիմնավորված եզրակացություն տալու ՀՀ կառավարությանն առընթեր ուստիկանության կամ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության իրավունքն, երբ առկա են գործող օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերը, որպես օպերատիվ կանխարգելիչ միջոցառում, արդարացված է:

Ինչ վերաբերում է նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված փոփոխությանը, այն է՝ ինքնաբուլս գանգվածային իրապարակային միջոցառումների անցկացման ժամանակային սահմանափակումները վերացնելուն, ապա գտնում ենք, որ, որպես կոլեկտիվ իրավունք, այն կարող է չարաշահվել և ծառայել իբրև իրազեկման կարգի շրջանցման միջոց, եթե օրենքով չնախատեսվեն կանխարգելող մեխանիզմներ: Այս պատճառով առաջարկվող փոփոխություններն ընդունելի չեն:

Նախագծի 4-րդ հոդվածը նույնպես անընդունելի է, քանի որ էապես սահմանափակում է ըստ ստեղծված իրադրության միջոցառումներ ձեռնարկելու ուստիկանության հայեցողական լիազորությունը: Զանգվածային անկարգությունները կարող են ուղեկցվել բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, իրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով, որոնց պարագայում կարող է անհնարին դառնալ անկարգություն կատարողներին մեկուսացնելը կամ իրապարակային միջոցառման բնականոն ընթացքի ապահովումը: Այսինքն՝ նախագծի 4-րդ հոդվածով սահմանված ուստիկանական պարտականության կատարումը ոչ միշտ է, որ կարող է լինել իրական կամ համաշափ անվտանգության սպառնալիքներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը :

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Ղանիելյանը: